



Դուք կարող եք ընտրել միայն մեկ ֆոնդ:

Եթե Դուք չեք կողմնորոշվում՝ ինչ տեսակի ֆոնդ եք նախընտրում և դժվարանում եք ընտրել ֆոնդի կառավարիչ, ապա համակարգը Ձեզ համար պատահական ընտրանքով ընտրում է կառավարիչներից մեկի ամառաբարկած պահպանողական ֆոնդը:

Ընթացքում հետևելով Ձեր կուտակային միջոցների կառավարմանը և ձեռք բերելով գիտելիքներ՝ Դուք կարող եք ցանկացած պահի փոխել Ձեր ֆոնդը/ֆոնդի կառավարչին:

Ֆոնդի/ֆոնդի կառավարչի փոփոխությունը տարեկան մեկ անգամ կատարվում է անվճար, մնացած դեպքերում դրա համար կարող է գանձվել որոշակի վճար:

Ֆոնդի կառավարիչներն ունեն ինտերնետային կայք, որտեղ Դուք կարող եք գտնել իրենց կողմից կառավարվող ֆոնդերի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն:

Կառավարիչների հայալեզու կայքերին կարող եք հետևել www.amundi-acba.am և www.c-quadrat-ampega.am հասցեներով:

Այս շարքից.



Իմացի՛ր ավելին...

www.ePension.am



«Կենսաթոշակային համակարգի իրազեկման կենտրոն» հիմնադրամ

Հասցե՝ Երևան, 0069, Կարապետ Ուլունցի 68

060 50 74 00
060 50 87 00

ePension@ePension.am



Այս տեղեկատվական թերթիկը ստեղծվել է Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄՁԳ) միջոցով: Բովանդակությունը միմիայն հեղինակներինն է և պարտադիր չէ, որ արտահայտի ԱՄՆ ՄՁԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետները:

ԿՀԻԿ

«Կենսաթոշակային համակարգի իրազեկման կենտրոն» հիմնադրամ



»» **ԽՆԱՅՈՒՄ ԵՆՔ ԲԱՐԵԿԵՃԻԿ ԱՂԱԳԱՅԻ ՀԱՄԱՐ**

ԻՆՉ Է ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴԸ



www.ePension.am

2

ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ԲԱՐԵՓՈՒՈՒՄՆԵՐ

2014 թվականի հուլիսի 1-ից մեկնարկել է

ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Եթե Դուք ծնվել եք 1974 թվականին կամ դրանից հետո
և վարձու աշխատող եք, նուտար կամ անհատ
ձեռնարկատեր, ապա 2014 թվականի հուլիսի 1-ից
Դուք **ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ** համակարգի
մասնակից եք:

Կուտակային կենսաթոշակային համակարգի բոլոր մասնակիցները
իրենց գումարները կուտակում են կենսաթոշակային ֆոնդերում:

**Պարտադիր կենսաթոշակային ֆոնդը ձևավորվում է
մասնակցի և պետության կողմից մասնակիցների համար
կատարված կուտակային վճարների, ինչպես նաև դրանց
կառավարումից ստացված եկամուտների հաշվին:**

Ֆոնդում կուտակվող միջոցների դիմաց պետությունը Ձեր անունով
ծեռք է բերում փայեր, որոնք հավաստում են ֆոնդում Ձեր սեփական-
ության բաժինը՝ Ձեր փայաբաժինը:

Ձեր կենսաթոշակային ֆոնդի կառավարումն իրականացնում է **ֆոն-
դի կառավարիչը**, որը հատուկ մասնագիտացված ֆինանսական
կազմակերպություն է:

**Ֆոնդի կառավարիչը լիցենզավորվում և վերահսկվում է
ՀՀ կենտրոնական բանկի կողմից:**

Գոյություն ունեն կենսաթոշակային ֆոնդերի հետևյալ տեսակները՝
Կայուն եկամտային • Պահպանողական • Հավասարակշռված



**Կայուն եկամտային ֆոնդը համեմատաբար ցածր
ռիսկային է և ապահովում է կայուն, ոչ բարձր
եկամուտ.**

Ֆոնդի միջոցներն ամբողջությամբ՝ 100%-ով ներդրվում են ամ-
րագրված եկամուտ ապահովող և ցածր ռիսկային ֆինանսա-
կան գործիքներում (օրինակ՝ ավանդ, պարտատոմս և այլն): Այս
ֆոնդերը նախընտրելի են այն մասնակիցների համար, ովքեր
գերադասում են ստանալ ոչ բարձր, բայց կայուն եկամուտ:



**Պահպանողական ֆոնդը միջին ռիսկային է և
կարող է ապահովել բարձր եկամուտ.**

Ֆոնդի միջոցները, բացի ամրագրված եկամուտ ապահովող ֆի-
նանսական գործիքներից, որոշ չափով (մինչև 25%) ներդրվում
են համեմատաբար ռիսկային ֆինանսական գործիքներում (օրի-
նակ՝ բաժնետոմսերում): Այս ֆոնդերը նախընտրելի են այն մաս-
նակիցների համար, ովքեր հիմնականում հակված են բարձր եկա-
մուտ ստանալու և պատրաստ են դիմելու նաև որոշակի ռիսկի:



**Հավասարակշռված ֆոնդը համեմատաբար
բարձր ռիսկային է և կարող է ապահովել
ավելի բարձր եկամուտ.**

Ֆոնդի միջոցները հավասարապես ներդրվում են ամրագրված
եկամուտ ապահովող (մինչև 50%) և ռիսկային ֆինանսական
գործիքներում (մինչև 50%): Այս ֆոնդերը նախընտրելի են այն
մասնակիցների համար, ովքեր հակված են դիմելու ռիսկի՝
ակնկալելով ստանալ ավելի բարձր եկամուտ:

**Անկախ Ձեր ընտրած ֆոնդի տեսակից՝ պետությունը
երաշխավորում է, որ Ձեր կողմից կատարված
կուտակային վճարները վերադարձվելու են Ձեզ՝
ճշգրտված տարեկան գնաճով:**

Կենսաթոշակային ֆոնդը չի կարող սնանկանալ, քանի որ այն
իրավաբանական անձ չէ: Նույնիսկ ֆոնդի կառավարչի սնանկու-
թյան դեպքում Ձեր կուտակած միջոցները **շարունակում են մնալ
Ձեր սեփականությունը.** պարզապես ֆոնդի կառավարումը փո-
խանցվում է մեկ այլ ֆոնդի կառավարչի:

Նախքան ֆոնդի ընտրություն կատարելը՝ Դուք պետք է կողմնորոշ-
վեք, թե ինչ ռիսկայնության ֆոնդ եք ցանկանում, ապա ընտրեք
ֆոնդի կառավարիչների առաջարկած որևէ ֆոնդ: Ֆոնդի կառավա-
րիչը կարող է առաջարկել միևնույն տեսակի մի քանի ֆոնդ, որոնք
տարբերվում են միմյանցից տարբեր ֆինանսական գործիքներում
իրենց ներդրումների մասնաբաժիններով:

